

ԱՐԻ՛, ՆՈՐ ՏԱՐԻ, ԲԱՅՑ ԱՅՆՊԵՍ ԱՐԻ՛ ...

ԾԱՆՐ ՕՐԵՐ ԵՆՔ ԱՊՐՈՒՄ

«Հողը մանկան պես գրկում է ոտքերը
ու շնչում...
— Ինձ մենակ մի թող...»

Ծանր օրեր ենք ապրում...
Հերթական անգամ մեր պատմության
ընթացքում դարերից ճանկում և կեր-
տում ենք արևի տակ ազատ ապրելու և
արարելու մեր կենսական իրավունքը:
Ընկնում ու պեկոծվում է աշխարհասփյուռ
հայի հոգին: Գոյամարտը կիսեց դարավոր
պատմությունը առաջ և հետո:

Հայն աշխարհի բոլոր ծեղերում էլի հա-
յացքը հառել է առ Աստված իր լուսավոր
սերնդին ի պահ տալով արյունով ներծծված
ու անգինացած հողին: Պատերազմը բախեց
բոլորիս տան, հոգու, սրտի դուռը: Արցախը
անդամահատված և արյունահոսող: Ներ-
քին պառակտումից և պաշտոնակազմից
տնքում է հայոց հողը: Տասնամյակներ են
պետք, որպեսզի հնարավոր լինի ինչ որ
չափով անկիրք խոսել գոյամարտի մա-
սին, գոյամարտ, որտեղ քաղաքական և
պաշտոնական կոստյումը պարտվեց զին-
վորական համագեցտին, կռաքարի վրա
դնելով հազար-հազար լուսավոր պատա-
նիների կյանքը, որը դերասան, որը երգիչ
ու բժիշկ: Ցավն անսփոփելի է:

Ետբայրը դարձել է մեր խիղճը: Մենք
ազգովի ծնկաչոք ենք լինելու ողջ կյանքում
այդ զագաթների առջև, նրանց արյան որ-
դան կարմիրը մեր խիղճն է լինելու հա-
րատն:

Ինչ բառեր գտնես, մխիթարանքի ինչ
խոսքերով փոքր-ինչ սփոփես որդեկորույս
մոր արեամբ վիշտը... Երբ ՄՈՐ որդուն
ԳԲԿԵԼՈՒ կենսական ցանկությունը
զարնվում է պատից կախված մեծադիր
նկարի ապակուն և մեջքը կոտրված վայր
ընկնում... երբ ՄՈՐ որդուն ՏԵՄԵԼՈՒ
կենսական ցանկությունը ավարտվում է

լավագույն դեպքում նրա շիրմաքմբի սառը
ու արցունքով հագեցած հողը ի երկինք
շարժելով, ոմանց համար էլ որդու շիրմը
անգամ տեսնելու երազանքով... երբ ՄՈՐ
որդու բարեկեցության համար մրմունջ
աղոթքը վեր է ածվում ցասման, վեր է
ածվում բողոք-ըմովզման, անգամ անեծքի



առ Աստված (մեղա քե՛զ Տեր)... երբ Մայրը չի՛ ուզում հերոս
որդի, այլ ուզում է ո՞ր ուրդի... երբ Մայրը երբեք ու երբեք չի
ընդունելու, որ որևիցե Հայրենիք, որևիցե հող ի հաշիվ իր
միակի արյան է... երբ հարսի թաքուն լացը, թոռան միամիտ
ԲՄ ՊԱՊԱՆ ԵՐԲԱ ԳԱԼՈՒ հարցը չի ուսովում... այլ փո-
խարհնվում է սեփական ապրելու մեծագույն մեղքով...
ինչ բառեր գտնես, ստեղծես, արարես... չկան բառեր,
բառերը մեռնում են դեռ չարտաբերված, մնում են միայն
բառարանների հաստ հատորներում, դառնում են սին...
Անմահների մայրեր, դուք այլևս մարդկային այլ տեսակ եք,
մենք մեղավորներս, Ձեզ պարտք ենք հավիտյան...

Բայց ողբը հավերժ է, եթե չկա պայքար, ինչպես
կասեր Հայոց քաջորդի Մովսես Գորգիսյանը: Արդեն
ժամանակն է ծնկաչոքից կամաց-կամաց մեջքը ուղղել: Հայր
առաքելություն ունի հարատևելու և իր կանթեղի լույսը
տանելու դարերն ի վեր:

Ջոյա ՎԱՐԴԱՆՅԱՆ,
հայոց լեզվի ուսուցչուհի

ԻՄ ՎԵՀ ՀԱՅՐԵՆԻ՛Ք, ԴՈՒ ՊԻՏԻ՛ ԱՊՐԵՍ



Երկրին հաղթելու համար հարկավոր
են փոքրաթիվ դավաճաններ և բազում
հիմարներ:
Չերչիլ

Փառք Աստծո, ոչ մեկի կարիքը չենք
զգացել: Վերջերս սարսափած իմացա, որ
նույնիսկ եղեռն իրագործելիս թուրքերն
ունեցել են վեց հավատարիմ հայ դավաճան
մատնել են, անուններ տվել, թալանել
մերձավորներին... ու շատ ամաչեցի... մեղմ
են ասում:

Պատմությունը կրկնվում է. պատմում
են կովող զինվորները. դավաճանել են
հրամանատարներ, զենքերալներ, փայտաղ-
ներ:

Լավ, չհոգնեցնեմ առանց այն էլ ձեր
տանջահար հոգին...

«Դժվար է հայ լինելը», — ասել էր
Անատոլ Ֆրանսը եղեռնից հետո:

«Դժվար է հայ լինելը», — չիմանալով
կրկնեց Պեգոլը պատերազմի դաշտից...

Ինչու ենք այսքան հպարտ հայ լի-
նելու համար... զարմանալի է, ամբողջ
մեր պատմությունը կորուստների վավե-
րագրում է, կորցրած մարդը մի թե կհպար-
տանա. ի նչ է պետք չէին մեզ մեր ծովույի-
ճը, քաղաքն ու ոստանները... շքեղ...
հպարտ ապրում ենք... հայ ենք...

Լսում էի ռուս զինվորական պաշտոն-
յայի, որ պատմում էր, թե աշխարհը զար-

մացած է հայ գրեթե պատանի զինվո-
րականների ոգու վրա, նրանց անձնագրի
պայքարի, նրանց երգ ու պարով ճա-
նապարհով դեպի կովի դաշտ: Բայց այդ
պատանին ու հայրը կովում էին 5 պետու-



թյան դեմ՝ ժամանակակից սպառազինու-
թյամբ, վարձու մոլեռանդներով: Հույներն
ասել են ոչ թե հայերն են կովում հերոսի
նման, այլ հերոսներն են կովում հայերի
պես:

Կովեցին, ընկան, կորցրինք...
Բայց նորից հայտնվեց Հույս անունով
ճառագող թագուհին:

«Սարսափելի չէ հային տառապանք
Մակայն չի կտրեր խոճուկի հուլարը»:
Մենք դարձել ենք Հեմինգուեյի ծովի
ծերունին... ազգովի, մեծ, փոքր...

Օրերս կարդացի նախկին նախա-
գահներից մեկի ունեցվածքի ցուցակը.
բանկեր, հյուրանոցներ, խանութներ, հան-
քեր... ու դրա հետ թավիշով կովող մի Դոն
Կիխոտ... քամու հետ...

Մարդ, որ նախագահ լինելով, դաստի-
արակել է պալատներ սարքող գեներալներ,
որոնց համար բանակի ունեցվածքը սե-
փական շահերին է ծառայել, դատական
համակարգ, որ պատվերներ է ընդունում
միայն վերններից... ուզում են հարցնել...

— Հարգելի նախագահներ, Օտոկա-
ձորը, Ջերմուկն ու Բյուրականը ձեր պա-
պենական կալվածքներն էին, որտեղ
կանգնեցրիք ձեր Գոլդեն փալատները...
ուկե պալատները...

Հայրենիքի մարդը սուկ նրանց հա-
մար աշխատած է եղել, որի հետ վար-
վել են ինչպես ցանկացել են. նույնը զին-
վորների հետ, որոնք սարսափելի փաստեր
էին պատմում ծառայությունից, իսկ բա-
նակում պատերազմի ժամանակ, դավա-
ճանությունից, դավադիր հայտարարու-
թյուններից...

Գիտե՛ք, միշտ մտածել են ինչու է
մնացել ծովից ծով հայրենիքից այս մեկ
տասներորդը, այս պատերազմով հասկա-
ցա... Չգիտեմ այլ ազգերի մեջ էլ այսքան
դավադիրներ կան, չեմ հավատում:

Իմ վեհ հայրենիք, դու պիտի ապրես,
դու պիտի խնդաս քո ազնիվներով, քո
փոքրությունը ընդունող որպես թանկ մա-
տանու քար վրաջ դողացող, փայփա-
յողներով, և զարմանալի զուգադիպություն,
«Հայր և հայր»՝ Վիրյամ Մարոյանը գրել է
Դոնի Ռոստոմովում հայի հանդիպելուց հետո,
և որոշել, որ աշխարհում երկու հայ էլ մնան
Հայաստան են կառուցելու:

Մենք «ճաշակել ենք» օտարի ու մեր-
ձավորի դավադրությունը. արհեստական
երկրաշարժ, արհեստավարժ մատնություն,
մեր գլխին փաթաթած պատերազմ... և
մտացած, որ մենք առաջինը քեզ ընդու-
նեցինք, Տե՛ր, մտացել էինք, որ առաջինը
միշտ կուտ է գնում... մեզ գրտնակեցին,
մենք դարձանք լավաշ և փաթաթվեցինք
աշխարհի խոճին:

Նոր տարի է գալիս, 2021 թվական.
թող նա միայն լավաշաբույր լինի, թող այս
տարին փակի 2020-ի բերած չարերը, թող
բարին հաղթի...

Արի, Նոր տարի
Խաղալիքի պես
Գունեղ ու փայլուն,
Ժպտա աշխարհիս,
Նա շատ է տխուր,
Վիստ է անհուն:
Մոր նման արի,
Ծոց ու գրպանդ,
Բարիքներով լի
Ձինջ խաղաղություն,
Հաշտություն երկրի
Եվ արդարություն
Մոր սրտից եկող,
Ոչ թե երկդիմի:
Արի, Նոր տարի:

Մուսանես ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ,
բանաստեղծուհի